

որոց աւերակներուն մէջ գտնուած են արծաթեայ դրամներ:

Նոր շուկայն հին շուկայից մի քիլոմէթրի չափ ներքեւ, նոյնչափ մի ևս բարձր դաշտի եզերքէն արևելեան հարաւ հակեալ դիրքի մի վերայ և երկու փողոցներու վերայ շարուած հարիւրի չափ կրպակներ ունի:

Կրպակներն մէկ դռնով նեղ ու մութ են, որպէս իրենց շինութիւններն՝ նոյնպէս կոշտ քարերով հիւսուած:

Արդէն Թօփրազ-գալէի մերձականներն քարահանք չգտնուիր, գտնուածն անձրևի ու արեգակի ազդեցութեան ներքոյ կը քայքայուի: Այժմ՝ տասնի չափ կրպակներ սկսուած են կանոնաւոր շինել: Կը գտնուին քանի շինութիւններ լաւ սրբատաշ քարերով շինուած, որոց մէկ մասը շատ հեռուներից բերուած է, մէկ մասն ևս բերդի, գերեզմանատան, հին վանքի կամ եկեղեցւոյ քարերն են, որ քանդելով բերած իրենց շինութիւններ շինած են:

Տեղս արհեստագործք սակաւ են, իւրաքանչիւրից մէկ կամ երկուք կը գտնուի, որք են պղնձագործ, թիթեղագործ, դարբին, կօշկակար, բրուտ, ներկարար, համետագործ, հնակարկատ, խոհարար, թրագործ, և Եւրոպական դերձակ:

Տեղական դերձակներն շատ են, որոց մէկ մասն ձմեռ ատեն կը հաստատուին քանի արձարաններու մէջ, կը ձևեն, կը կարեն:

Երկու՝ երբեմն չորս զինետունք բանուկ վիճակի մէջ են. կը գտնուին շուկայից դուրս, որպէս զի ջերմ մահմետականներու մոլեռանդութիւնը չը գրգռեն:

Ոգելից ըմպելիքը Կարնէն կը բերուին, շատ քիչ անգամ Սարբերդու ընտիր և կարմիր զինիի երես կը